

Հայտարարություն

Ռուսաստանի Դաշնությունում 2017 թվականին անց է կացվելու «Իմպուլս» սոցիալական գովազդի ամենամյա մրցույթը, որի կազմակերպիչն է «Ռուսաստանն այսօր» («Россия сегодня») միջազգային տեղեկատվական գործակալությունը:

Մրցույթի հիմնական նպատակն է զարգացնել սոցիալական գովազդի ոլորտը Ռուսաստանի Դաշնությունում՝ որպես քաղաքակիրթ և հումանիտար չափանիշների կիրառման արդյունավետ գործիք, ինչպես նաև պետական մարմինների կողմից գովազդի ստեղծման գործընթացը հասցնել որակապես նոր մակարդակի:

Այս տարի մրցույթի կազմակերպիչները մտադրություն են հայտնել մրցույթին ներգրավել նաև ԱՊՀ մասնակից-պետությունների պետական իշխանության, տեղական ինքնակառավարման և այլ իրավասու մարմինների ներկայացուցիչներին:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն ըստ հաստատված ընթացակարգի 2017 թվականի սեպտեմբերի 18-ն է, սակայն կազմակերպիչները պատրաստակամ են առանձնահատուկ դեպքերում վերանայել նշված վերջնաժամկետը:

Մրցույթի վերաբերյալ առավել մանրամասն կարելի է տեղեկանալ www.konkurs-impulse.ru ինտերնետային կայքից: